

սին, որ քեզ կարող է տալ, քիչ արժեք ունի որով զու կապվէիր, այն-շափ աւելի բարձր է քո իսկ կեանքի զինը։ Այն ժամանակ միոյն Առաքեալի հետ, նորա քաջ ու բարեպաշտ հոգովի կարող ես ասել։ « Ան+ Գլուխինը էն+ և քիտեն+։ որ նև առանց Աջ խողըն+։ բայց Աստվածանն էն+»։

Ա՞ր տարաւ ինձ այս մտածողութիւնս։ Աչա կանգնած եմ, ինքնս ինձանից օտարացած և նայում աշխարհիս վերայ, ինձ վերայ և դեպի վեր, ով Աստուած, քեզ վերայ։ Կայելով այն ամեն բանի վերայ, ինչ որ ինձ աւելի գեղի իւրեան է քաշում։ այն ամեն բանի վերայ, որ իմ սիրոս ուրախացնումէ։ կամ ինձ սաստիկ տրամութեան ու ցաւի մէջ կարող է ձգել, եթէ որ կորցնէի — ու ես իմ զինս, իմ արժեքս կշռումն ու հառկանում։ Դեռ ևս ես իմ ներքին կատարելութիւն ունենալուց հեռու եմ։ ախ սիրումն ու վախենումն որ այս կեանքիս մէջ շատ ու շատ բան, ոչ իմ սաստիկ սիրոյս, և ոչ ինձ վերայ սարսափելի կերպով ներգործող երկիւզիս արժանի են։

Տէր, սովորեցրու ինձ միշտ մտքիս մէջ պահել։ թէ ի նշալէս շուտ թըս-չող՝ անց կացող են իմ օրերս, ի նշալէս անհաստատ են այս աշխարհիս ամեն բարիքը, որ ես, քեզանից չհուանալով, իմաստուն չափաւորութեամբ վայելիմ և վսեմ միիթարութեամբ կորցնել կարողանամ։ Այս է իսկապէս աշխարհ ուրանալը, որ իմ Փրկիչս ինձ սովորեցնումէ։

Տէր, սովորեցրու ինձ մտքումն պահել, որ այս ապրելս այս աշխարհիս մէջ իմ ունենալու անվերջ կեանքիս մի փոքրիկ կէտն է, որ իմ կեանքս ու բնակելու տեղս երկնքումն է։ Թէ ինչ վիճակի մէջ պէտքէ լինի իմ հոգիս մահից յետոյ, այդ ես չդիտեմ, և եթէ այժմ գիտենայի ես, չէր կարողանայ հանկանալ։ Ինչ որ ոչ չէ ուեւել ու ականջ չէ լ-ել և ոչ հորդէ որուի է անց չ-ցել, դու ն-դա իւրադեմ, ուրան+ +ել սըսումն ։

Տէր, տուր ինձ զօրութիւն։ Դու, Տէր, հոգի ես, և ուր որ Աստուծու հողին է, այնտեղ ազատութիւն է,

(Խառնէմ.)

Գլ. Եղ. Աղ.

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԻՑԻՑ ՔԱՂՎԱՆԾՈՅ ԽՆԴԻԲՆԵՐ.

||.

Իւրաքանչիւր ուսուցչից պէտքէ պահանջել, որ նա զիտենայ։ 1) այն առարկաները, որ պիտի յանձն առնէ գաս տալու։ 2) այդ տռարկաների զասատութեան էշնաւ։ և 3) որ նա զպրոցի մէջ սովորող մանուկների անձնական յատկութիւնները ճանաչելու կարողութիւնն ունենայ։ Բացի սորանից ամենայն ուսուցիչ պէտքէ հետաքրքիր լինի զիտենալու այն բոլոր առարկաների ներքին կապը, որոնք անհրաժեշտ են ժողովրդական զպրոցներին։ Այդ առարկաները սոքա են։ Մայլենի լեզու, բարոյականութիւն կամ կրօն, բնագիտելիք, աշխարհազպրութիւն, պատմութիւն, համարողու-

թիւն, զբութիւն, նկարչութիւն՝ երաժշտութիւն և մարմարզութիւն՝ թէպէտ այս առարկաները միմեանցից տարբերումնն ըստյ նայելով իւրեանց ներքին յարաբերութիւններին, բոլորն ևս մի և նոյն նպատակն ունին, այն է բարեկանչ, նորդաց և նորդարող բառութիւններու մասին պատրաստել Աւրեմն երբ աշակերտները կրթվելով զառնան ինքնուրոյն մտածող, բարեխղջարար զառաղ և ձևանարկած գործը շնորհալի կերպով կատարող երիտասարդները ոյն ժամանակ այդ առարկաների դասաւանդութիւնը կատարած կմնի իւր գործը զպրոցի մէջ, Աւրիշ Խօսպով, զպրոցն ունի երեք Էական խնդիր լուծելու. Նա պէտքէ այդ առարկաների օգնութեամբ այնպէս անէ, որ աշակերտները սովորեն առարկաները, սովորածնին գործ դնել կարօղանան և իւրեանք ևս այդ բերենալու և էարութեանը շնորհով զառնան պիտանի մարզիկ.

Դայելով զասաւանգական առարկաների արտաքին և ներքին յատկութիւններին ու ազգեցութիւններին, կարելի է զոցա բոլորը երեք զասակարդի բաժանել. 1 զասակարդի տակ մանողները պահանջումն աւելի մեքենական և մտաւորական վարժութիւն. 2 զասակարդի տակ մանողները առաւելապէս զիտակցութիւն և կամ հասկացողութիւն են պահանջում, 3 զասակարդինը պահանջումն ընդհանրապէս կրթմունք:

Առաւելապէս մեքենական վարժութեան են վերաբերում լոկ կարդալը, զբելն ու նկարելը. մտաւորականնին—մտքի զբաւոր ու բանաւոր արտայայտութիւնն ու համարողութիւնը (թուարանութիւնը). զիտակցարար ըմբռնել պահանջումն բնագիտելիքն, աշխարհազրութիւնն ու պատճութիւնը:

Սրտի և կամքի կրթութեան ծառայումէ կրօնը, մարմնի կրթութեանը—մարմարզութիւնը, զգացմոնքի կրթութեանն—երաժշտութիւնը. Այս կային այս բաժանումն այնպէս ձիշու ու որոշ չէ, որ կարելի չլիներ մի քանի առարկաներ տեղափոխել ու այս կամ այն զասակարդի տակ զիտակցիլ.

Կրօնի, երաժշտութեան և մարմարզութեան զասաւանդութիւններն համարվումն միմեանց օգնող կրթական միջոցներ. Այս կարող էր ուսարութեանի ընթերցովին, բայց իսկ որ այս առարկաներն այդ յատկութիւնն ունին, Գորա Խորեանց ազգեցութիւնը տարածումն մարզիս ամբողջութեանը վերայ. Կրօնը կրթումէ հոդին, երաժշտութիւնն զգացմունքը մարմարզութիւնը պատրաստումէ թէ հոգու և թէ զգացմունքի համար առողջ բնակարան. Այդ առարկաներն ևս սկսվումն զննութիւններով, Կրօնը հիմնվելով սուրբ զրի պատմական, բարյական և բանապիրական հատուածների վերայ, զննումէ աշխարհիս Փրկչի կեանքը, զործերը և մահը, տալիս է զեղացիկ օրինակներ Ճշմարտին հետամուտ լինելու համար. Պարմամարզութիւնը զիտակցարար նորմանիկութ աչքի առաջն կատարվող կը թութիւններից երաժշտութիւնը լոկիմի օգնութեամբ հաղորդումէ տպաւութիւններ, որոնցից կազմվում բարի զգացմանը—բարյական զգացմունք:

Կրօնի նպատակն է աշակերտի սրտի և հոգու մջ տպաւորել սէր դէպի

Արարիչն ու իւր արարածները, բարեխղճութիւն ամենայն գործողութեան մէջ՝ ինքնուրոյնաբար բարու ընտրութիւն և չարի մերժումն:

Մարմամարզութեան նպատակն է մարմի կրթութիւնը, այն է մարմարկանց զօրութեան վերայ հիմնված քաջութիւն, որով կարելի է տանել վշտերին, տոկալ վտանգների դեմ, և մեր մէջ փայլցնել այն հաճելի երեցթը, որ անուանումնք շնորհալի նէստումք, շնորհալի ճարտարութիւն:

Երածշտութեան նպատակն է սովորոյթի օրէնքով ընտելացնել լսելիքը ձայնի ներդաշնակութեանը, զգացմունքը կերպառորել և մարդու գեղեցիկ ու վսեմ ապաւորութիւնների ընդունող անել:

Բ.

ՄԷԼԱՅԱԸ Դ ՌԵՆ ՀԱՆՀ Բ-Ջ-Դ-Ռ-Հ-Դ:

Պաստիարակութիւնը երեք միջոց ունի իւր նպատակին հասնելու համար. 1) խնամատարութիւն, որ ընդհանրապէս տեսումէ մանկութեան օրից մինչեւ պատանեկութեան հասակի վերջը; 2) Կարդապահութիւն, որ էապէս սկսվումէ մանկութեան օրերից և տեսումէ մինչեւ ուսման կատարեալ ընթացքի վերջը; 3) զասաւանդութիւն, որ տեսումէ առաջին զասից մինչեւ զպրոցական ուսման վերջը: Մենք միայն զասաւանդութեան նիւթերի վերայ պիտի խօսնենք առաջման: Յայտնի է որ մարդս իւր կեանքի առաջին ըստէից մինչեւ վերջին ըստէն ապրումէ ընտելեան մէջ ու մարդկութեան հետ, և պէտք է ունենայ բարդյականութիւն: Ուրեմն նա իրեւ բանական էակ պէտքէ զիտակցարար ճանաչչ ընտելեան, մարդկութեան և բարդյականութեան օրէնքները ու պահանջները: Հետեւաբար երեք զլիստ որ և անհրաժեշտ ուսման նիւթեր կան մարդիս համար իմաստասիրելու: այն է տիեզերախօսութիւն, մարդախօսութիւն և բարդյախօսութիւն:

Ա. Տիեզերախօսութիւնն ամփոփումէ իւր մէջ աշխարհիս տեսանելի կամ զդալի նիւթերի զիտութիւնը: Այս նիւթերը նախ և առաջ ունին թիւ և ըստումն տարածութիւն: Սոցա յարարելութիւնները ճանաչչու համար պէտքէ լինում շափել և հաշուել: ուստի հարկաւոր է ունենալ տարածութեան ուսումն, որ է էրբուրութիւն: և համարելու կամ հաշուելու զիտութիւն, որ է բարդութիւն: Այս երկու զիտութիւններն ամբողջապէս ըմբռնելով, կամ միասին առած առվումն մատեմատիկայ, որոնց տարելքն են միայն աւանդվում ժողովրդական զպրոցների մէջ: Տիեզերախօսութիւնը զննելով երկրիս ինչութիւնը ասվումէ էրբուրութիւն (աշխարհագրութիւն): քննելով նորա բնակիչների մէջ պատահած իրադրութիւնները կոչվումէ պարագանել: քննելով ամբողջապէս ընտելիւնը անուանվումէ բնակչութիւն, որը բաժանվումէ բնագիտութեան և բնական պատմութեան: Ուրեմն տիեզերախօսութիւնից ծաղած զասաւանդելի նիւթերը բնականապէս հետեւեալներն են: 1. թուարանութիւն: 2. երկրաչափութիւն, որի հետ անբաժան միացած է 3. զծազրութիւնը կամ նկար-

Ժութեան կողբունքը, կ, աշխարհագրութիւն, 5, պատմութիւն (Ազգային և բնդշանսուր) 6, բնախօսութիւն—բնագիտութիւն և բնական պատմութիւն, 7, հարկէ ժողովրդական զպրոցների մէջ չէ կարելի այս գիտութիւններն իւրեանց ամբողջութեամբ և ուսումնական ճիշտ սկսություն աւանդել, այլ հարկաւոր է ընտրել այնպիսի նիւթեր սոցա մէջից, որոնց կարելի լինի զիւրին և զննական կերպով հաջորդել և որոնք լինին միանգամայն զարգացուցիչ և գործնական այսինքն օգտաւէտ:

Բ, Մարդաբիոսութիւնն ամփոփումէ իւր մէջ մարդիս մարմին և հոգու կամ մորի ուսումն, նույն որ կվերաբերվի մարմնականին, պէտքէ բնախօսութեան նիւթ համարել, որ արգէն յիշեցինք. իսկ ինչ հոգեկանին կոպատկանի կամ մտաւորին, սա հետեւեալ ճիւղերն ունի իմաստասիրելու. Մարդիս հոգեկան կարողութիւններն հանդիսանումն իւր ժողովունքի, զիացունքի և իւնքի մէջ. 1, Մարդս իւր մտածմունքն արտայայտումէ լեզուով և սորանով հասնումէ իւր ամենակատարեալ զրութեանը. Ակզենական լեզուն մարդիս համար իւր մայրենի լեզուն է, որով կարելի է շուտ և բնականապէս հասնել մտածման կատարելութեանը. մայրենի լեզուն է, որով մանուկը զիւրին և բնական կերպով արտայայտումէ իւր մտածմունքը. Անկարելի է օտար լեզուի միջնորդութեամբ, ուսման սկզբում, մանուկին զարգացնել բնութեան պահանջներին համաձայն. Աչ միայն մանկավարժական գիտութիւնը, այլ և ընդհանուր մարդասիրութիւնը պահանջումէ, որ մանուկին շուրջ և հիմաստը կերպով զարգացնելու համար, ուսուցիչները խօսեն նորա. հետ իւր մայրենի լեզուով. Այս պատճառով մայրենի լեզուն ժողովրդական կամ ազգային զպրոցների մէջ առաջին և խորհրդաւոր տեղը պէտքէ ունենայ. Լեզուի ուսումն երկու էական ճանապարհով է կատարելազործվում, նախ իշխանութեան, քրութեան, և ընթերցանութեան օգնութեամբ. երկրորդ լեզուի կանոնները խօսակցութեան և զրութեան մէջ բնությունը բործածելու. Հարկաւոր է ուրեմն ընթերցանութեան, քրութեան և ութանառնեան. 2, Մարդս իւր զգացմունքն արտայայտումէ ձայնով ևս, որ երածշութեան նիւթն է կազմում. Երածշութեան կատարելութիւնը վարժ և ներգաշնակ երգելն է. Սակայն ինչպէս անկարելի է ուղիղ և գիտակցարար խօսել և զրել առանց վարժվելու քերականութեան և ընթերցանութեան մէջ, նոյնպէս անկարելի է վարժ և ներգաշնակ երգել առանց ձայնագրութեան մէջ (նօտայ) վարժվելու. Չայնագրութիւնը երգի որին է, առանց նորան երգը անհոգի դիակ է կամ մի աններելի և անտանելի խուժանական ազմուկ. Աչ մի քաղաքակիրթ ազգ չէ կարող առանց ձայնագրական երաժշտութեան լինել և մնալ. կամ այսպէս ասել, ուր չկայ ձայնագրական երաժշտութիւն, այնտեղ ճաշակագիտութիւն (էստէտիկա) չկայ. հետեւարար այն ազգը, որ ձայնագրութիւն չունի, նազուրիկ է գեղեցկագիտական ճաշակից, ուրեմն և զորկ է վսեմ զարգափարներից. Միայն գիտակցարար երգելն է արտայայտում զգացմունքի կենցանի պատկերը. և սա է, որ կարող է երգողին և լսողին բարոյագիտ վեր-

ամբատնալ և նոցա ճաշակագիտական (էստէտիկական) զգացմունքը վրա սեմաբար գորդացնել, Զգացմունքը զարգանումէ նաև ճաշակագիտական և բանաստեղծական զրուածների ընթերցմունքով . նաև հիմքառնեամբ, և յս վերջինը զարաւանեգելի ասարկաների մի ճիւղն է, որ անհրաժեշտ է ժողովրդական զպրոցների համար և որ կատարելազործվումէ չեղուի յւերի ընդունակութեամբ, և ինքնուրացն արտադրութեամբ, որ և ծնուցանումէ և զարգացնումէ աշակերտի մէջ ճաշակագիտական կամ զեղեցի զգացմունքը:

3. Կամքը կամ կամեցողութիւնը հանդիսանումէ մարդիս շարժմունքի և արարմունքի մէջ: Միտքն իւր կամքն արտայայտումէ մարմին անզամերի միջնորդութեամբ: Մարմինը պէտքէ ուրեմն տոկուն, ճարպիկ և համարձակ լինի, որ կարողանայ մարին ծառայել, ինչպէս հարկն է: Բայց մարմինն այն ժամանակ միայն յիշեալ յատկութիւնները կունենայ, երբ իւր ամեն մասը բազմազիմի կերպով վարժված ու առողջ լինի: Այս նպատակին հասնելու համար ամենընտիր միջացն է կանոնաւոր մարմամարզութիւնը: Մարմամարզութիւնն այնքան կարեռ է ժաղովրդական զպրոցների համար, որքան կարեռ են միւս դասաւանդելի ասարկաները: Այժէ այդ զպրոցները չեն կամենում հիւանդութեան օրորան լինել, այլ առողջ ոերսնդ զարգացնելու պաշտօնը պէտքէ ունենան: ապա անշուշտ պէտքէ այս դիտութիւնը նոցա մէջ ընդունվի: Թէև չին, բայց անհրաքելի ճշմարտութիւն է որ առողջ միտքը կարող է լինել առողջ մարմին մէջ . . . մարի, հոգու և կամքի ձգտմունքը կատարելազործողն առողջ մարմինն է: «Մասսիս» լրագրի 1113 թուի մէջ հետեւեալն ենք կարգացած: «Բրուսի Կառավարութիւնը հետեւեալը կհաստատէ իր հրամանագրին մէջ . . . վերջին պատերազմին ժամանակ մէր զօրաց ցոյց տուած կարգէ գուրս ձիբքերը, ճամբայ քալիելու անխոնջ ոյժը, թշնամի երկրի մէջ ամեն բնական և արշեստական արգելքներու և գժուարութիւնը և պաշտիանական կուուի մէջ քաջասրտութիւնը և պաշտիանական ամեն կարութութիւնների և նեղութիւնների հաստատամութիւնը որ ընդհանրապէս ճանչուած և սքանչացում պատճառած է, այս ամէն առաւելութիւնները մէծաւ մասամբ զպրոցներուն և ետքն ալ բանակներուն մէջ հարմարացնան լընեւնեւուն արդիւնքն են: Այս լրագրի 1112 թուի մէջ նոյնպէս հետեւեալն ենք կարգացած: Խուսական Մեսամէ Օֆիսել լրագիրն եւրոպիոյ քաղաքական վիճակի վերայ ընդհանուր ակնարկ մ՝ անելով, Գերմանական զօրաց անակնալ և մէծ յաղթութիւններու պատճառները կքննէ: կըսէ թէ « յաղթութիւննեան պատճառները Գերմանիոյ ընկերութեան հիմն եղող և ընդհանրապէս ծաւալած լընեւնեւուն և հարմարացնան վարժութիւնների մէջ են, որք բարյուկան քաջասրտութեան, մարմանական զօրութեան և համբերատար կարգապահութեանը զարգացման մէծապէս կնպաստեն: « Այսոս միայն, որ մէր զպրոցները այս առողջարար դիտութեան վերայ պաշտիանական աշքով են նայում: Ժամանակ է, որ մէր յարգոյ մանկավարժները հոգ տանեն այս ամենակարեռ առարկայի մասին: Սենք ասացինք որ

մարիս, հոգու և կամքի ձգտմունքն իրագործվումն մարմին միջնորդութեամբ, Պէտքէ աւելացնենք թէ այս հոգեկան ձգտմունքը և արտայայցառմիւններն անշուշտ պէտքէ հիմնվին բարոյական սկզբունքի վերաց: և թէ բարոյական սկզբունքին ծանօթացնողն էապէօ կրօնը կամբարոյախօսութիւնն է:

Գ. Կրօնի նպատակն է մարդիս միտքը, զգացմանքը և կամքը բարոյապէս զարգացնել, Կրօնն է այն ամենակարող զօրութիւնը, որով պէտքէ մարդկութիւնը իւր ստորագարշ զրութիւնից, իւր գոհչիկ նախապաշարմանքից վատթար արարմունքից բարձրանայ և միանայ գերագոյն բարոյականութեան այսինքն Աստուծու չետ: Բոլոր զիտութիւնների նպատակը երկրաւոր երջանկութիւնն է, ուրեմն ժամանակաւոր և սահմանափակված է, այն ինչ կրօնի նպատակը պարունակելով իւր մէջ երկրաւոր երջանկութիւնը, անցնումէ նոյնպէս երկնաւոր երջանկութեան ևս որ է մարդիս վախճանական նպատակը, Բայց աւաղ մեր զալոցներում աշակերտը վեց եօթն տարի կրօն է ուսանում և կարծես բարոյականութեան զործնական ուսումից զուրկ մացած է զուրս գալիս, Երիտասարդը փոխանակ յուսով սիրով և անկեղծ հաւատով քաջալերվելու, նա զուրս է գալիս իւր ապագայից յուսահատված, սիրազուրկ, կասկածու առ ամենայն ինչ, իւր նշանակութեանն անձանօթ, մոլեսանդր կեղծաւոր, և այլն և այլն, որովհետեւ կրօնի ուսուցիչներն չեն «առնում նախ և ապա ուսուցանում», այլ սորա հակառակ, զայլս ուսուցանեն և ինքեանք ոչ առնեն, եթէ այս առարկաները ըստ սովորականին գասաւորենք, չետեւալը կստանանք:

Ա. Ա. 1. Կրօն, 2. լեզու, 3. երաժշառութիւն, այս առարկաների խումբը մանկավարժութեան մէջ ասվումէ բառական (տեսական):

Երբերդ, 1. Թուաբանութիւն, 2. երկրաշափութիւն (մատեմատիկայ), 3. աշխարհագրութիւն (բնական, ուսողական և քաղաքական), 4. պատմութիւն (ազգային և ընդհանուր), 5. բնախօսութիւն (բնական պատմութիւն և բնագիտութիւն). այս առարկաների խումբն ասվումէ էլեկտրոն (բէալական):

Երբերդ: 1. Նկարչութիւն (զծագրութիւն և ստուերագրութիւն), 2. գեղագրութիւն կամ վայելչագրութիւն, 3. մարմնամարզութիւն, այս առարկաների խումբը ասվումէ ռուսիսին կամ արուեստագործական (Ճարտարական):

Նայելով թէ այս զիտելիքները լոկ խօսքերով են աւանդվում, թէ զզալի իրերի միջնորդութեամբն դորա համեմատ զասաւանզական ձեւն ևս ասվումէ չէրտուիտան կամ վնասիան: Հներն ուսուցանումէին լոկ խօսքերով, ուստի նոցաւ աւանդման ձեւ կոչվումէր վերացական: Նոր մանկավարժներն ուսումնեամբ սկսումն զբալի կերպով կամ նիւթեղեն իրերի զննութեամբ, սոցաւ զասաւանզութեան ձեւ կամ եղանակը անուանվումէ իրազննական կամ պարզ ընտանիա:

Գ.

Մէ հոյեաց քասուցանդուրեան եղանակի (մէտօղի) ու նորոգովով վերոյ:

Ուսուցման եղանակի և նպատակի վերայ հմուտ մանկավարժների կարձիքները շատ բանօվ են տառըրերզում: Ումանիք պնդումն թէ զեռ ևս իւրաքանչիւր դաստաւանդական առարկայի համար ճիշտ ուսուցման եղանակ չէ գոնված: ապացուցանումն որ առանց մշակված եղանակի, ոչ մի ուսուցիչ չէ կարող օգտաւէա անել իւր առարկանց օրչափ ևս լաւ զիտենար այդ առարկան և թէ լաւ ուսուցիչը պէտքէ բացի իւր էսէնեն եղանակից գիտենայ նոյնպէս այն բոլոր կանոնները որոնք գտնել են հմուտ մանկավարժները: Աան մարդիկ, որ թէկ չեն հմուտ մանկարկաւորն է, բայց կարծումն որ անձնական կամ ընդարձայ պէտքէ լինի զաւ և ոչ ստացական, քանի որ հաստատուն և անփոփօխ եղանակ չկայ այս և կամ այն դէպքի, այս կամ այն առարկայի համար ճշմարիտ է, միենցն նպատակին մարդ կարող է այլ և այլ ճանապարհներով ևս համեմել բայց այդ ճանապարհներից որն է աւելի շուտ և հեշտ կերպով հասցնում որոշեալ նպատակին, անշուշտ այն է ամենից զիրագոյնը, ամենից նպատակայարմարը: Ով կամենումէ կշռել այս կամ այն ուսանելի առարկայի ուսուցման եղանակը, նա պարտաւոր է նախապէս այդ առարկայի ուսուցման նպատակը բացայայտ որոշել զիտենայ: Այստեղ հարկաւոր է որոշել թէ ի՞նչ քանակութեամբ պէտքէ աւանդել այս կամ այն առարկայից, որքան ժամանակում, շաբաթական քանի՞ ժամ պարապելով և ի՞նչ աստիճանի զարգացումն պէտքէ յառաջ բերել աշակերտի մէջ: Նոյնպէս հարկաւոր է զգուշանալ այն սխալմունքից, որին մեր ուսուցիչներից շատերն են ենթարկված, այն է հարիւր աշակերտի մէջ 5 կամ 10 աշակերտի յառաջադիմութեամբ գոհ լինելը, և անուշաղիր թողնել բազմութիւնը: Ընդհակառակն ուսուցչին պէտքէ համարել այն ժամանակ իւր նպատակին հասած, երբ իւր աշակերտների մեծագոյն մասն է յառաջադէմ: չէ թէ փոքրագոյնը:

Գոյզոցի նորոգովով է սուսուցանելով իրեւ Այս նպատակին համելու զիտաւոր միջոցն է ողջամիտ դասատրութիւնը և նոյնպէս ուսուցչի բարեկամական յարաբերութիւնը դէպի իւր աշակերտները: Բայց դասատրութիւնը կարող է իւր խնդիրը իրագործել և պարտքը կատարել այն ժամանակ, երբ թէ ձեռով և թէ պարունակութեամբ բոլորովին կհամապատասխանէ աշակերտի հասակին և զարգացման աստիճանին: Մեր մանկավարժները զեռ ևս ամեն հասակի կամ իւրաքանչիւր դասարանի զարգացման աստիճանին համեմատ ընտրած և դասաւորած ուսուցանելի նիւթերը չունին: Ուստի ամեն ուսուցիչը առաջարկումէ աշակերտին իւր կամեցած նիւթը, որ լինումէ շատ անգամ թէ ձեի և թէ բովանդակութեան կողմից անմարտնիի: և երբ մանուկը չէ կարողանում ըմբռնել, բարեխիղձ ուսուցիչը նորան ստիպումէ մոշի առէիր անել: Այսպէս էին անում և բոլոր հին մանկավարժներն եւս: Բայց փորձը ցոյց տուաւ որ սա ամենավտանգաւոր

սխալմունքից մեկն էր գովրոցական աշխարհում, որ մեծամեծ զոհեր էր տանում: Հանճարեղ մարդիկ ու շաղրութիւն գարձրին մարդկային մարի գարզացման ընթացքին: Քննեցին և համոզվիցան, որ հարկաւոր է առանձին խնամքով նայել աշակերտի հոգի առողջանութեալ վիրայ: իւրաքանչիւր աստիճանի մեջ հարկաւոր է տալ աշակերտին յարմար նիւթեր: Նախ հեշտն ու պարզը յետոյ գժուարն ու բաղադրեալը:

Այս հանճարեղ մարդիկների աշխատասիրութեան շնորհով մանուկների միտքը թթացնող անօդուտ իմաստակութիւնները տեղի տուին ոչըսմաւ եւ շահանութեն: Անզիր անելը կորցրեց իւր ստրկացնող նշանակութիւնը: ամեն մանուկի միջոց տրվեցաւ մշակել իւր հօգեկան զօրութիւններն ու կարողութիւնները համար առաջարկութեալ և կանոնաւոր քայլերով:

Մի պարզ և պայծառ միտք առաջնորդումքը այժմ զեպի ու դիզ եղանակը: Դա այն միտքն էր թէ բաւական չէ մայն առարկան զիտենալ, պէտք է առարկայի գիտութեան հետ առաջութեալ նիւթեն յարմար իւղաւան: Եւ քիութեալ

Ի՞նչ բան է եղանակը: Եղանակ կամ մետօդ ասելով հասկացվումէ այն դասաւանդական կերպը, որով դասաւուութիւնը հասնումէ ուսուցման նախորոշ նպատակին: որը տալիս է աշակերտին մի յայտնի չափով քիտունին: Հոգածութեան և լուրջութեան: Մէտօդը նախ և առաջ ընդհանուր կանոններ է տալիս: միեւնոյն ժամանակ հետեւեցնումէ զոցանից ևս մասնաւոր կանոններ և նախազրութիւններ, յետոյ նշանակումք ժողովրդական զպրոցի իւրածանչեալ առողջանութեան յարմար ուսուցման նիւթերը: և վերջապէս նույն հետեւանք իւրածանչեար բարութեալ մանուկների հասակին համեմատ: Գուցէ ընթերցողը հետեւեցնէր այստեղից թէ ուրեմն լաւ ուսուցիչ լինելու համար հարկաւոր էր միայն ամենալաւ մետօդիքական զրերից մէկը մի լաւ բերան անել, մոքին պահել, ուրիշ այլ ևս բան պէտք չէր: Այս հետեւանքը ճիշտ չէր կարող լինել: Այսպէս որ լինէր: Եւրոպացիներ հարկաւոր չէին համարի ուսուցչական զպրոցներ (սեմինարներ): Հիմնել, այլ ամեն ուսուցիչ եղողից կպահանջմէր, որ նա նախապէս մի հատ մետօդիքական զիրք գնէր և նորա մէջի կանոնները սերտէր ու ուսուցչի հարցաքննութիւն տար և պաշտօն ստանար: Այլ ևս ի՞նչ հարկաւոր էր այնքան աւելորդ ծախսեր անելն ու ժամանակի կորուստը: Դաստիարակութեան արհետութեան առողջանութեան բան է: Մէտօդը հարուստ բարեւան մէր ուրաքանչ է, համոզման և սիրոյ արտայայտիչ ցուցակն է:

Մէտօդի հիմնական օրէնքները այս, պէտք սպառել, բայց միենոյն ժամանակ իրեւ օրէնք պէտք աշակերտների ձիրքերին և ընդունակութիւններին յարմարեցնել և բոլորովին ազատ կերպով զործ զնել: Սա պահանջումէ հետեւալ պայմանները: 1) ուսուցանելի առարկայի ճշգրիտ զիտութիւն, 2) ուղիղ գնահատութիւն այն կարևորութեանը, որ այդ առարկան ունենալու է զպրոցի և զործեական կեանքի մէջ: 3) Բաղմակողմանի քննութիւն մարդկային հոգեկան կարողութիւնների և մասնաւորապէս իւր

աշակերտներինը: 4) ուսուցչի կողմից անկեղծ սէր դեպի աշակերտներն ու զէղի իւր պաշտօնը, և 5) դառախոսնելու հմտութիւնն Առաջին, երկրորդ ու երրորդ պայմանները կարելի է ձեռք բերել ջանասիրութեամբ, իսկ չորրորդ ու Հինգերորդ էական պայմանները պէտք ուսուցչի ընաձին յատկութիւններ լինին, Այստեղ՝ երեւումէ թէ որբան մեծակշիռ պայմաններ են հարկաւոր լաւ ուսուցիչ լինելու համար, միևնույն ժամանակ երեւումէ, որ լոկ մէտօղիքական կանոնները անգիր անելով, ոչ ոք լաւ ուսուցիչ չէ կարող դառնալ, ինչպէս որ լոկ զեղերի տոմսակ գրել իմացողը չէ կարող լաւ բժիշկ համարմիլ, Մէտօղիքական գրուածներն անգիր անելն կլինի մի արտաքին անարժեք ստացուածք, որով երբէք չէ կարելի ազատ շարժմիլ դպրոցի մէջ և շատ բան ևս չես կարող առաջացնել: Կարող ենք ասել, « Մէտօղը լոկ ձեւ չէ, որին ամեն ինքնակու ուսուցիչ իւր կամցած գոյնը տար», Մէտօղը մի հմուտ անձի կողմից պատրաստված խորհրդաւոր ուղեցոյց է այն ուսուցչի համար, որ այս միջոցը ազատաբար կարող լինէր զործածել, իրը օժանդակ միջոց: Հետեւիր մէտօղին, բացց մի՛ ստրկանար»:

Դ.

Կորեկտունակէ հետ վարչեւու ճակն:

Աշակերտներն եկել են. ուսուցիչը կարգով նստեցնուումէ ամենքին, իւրաքանչիւրի անունը, հայրանունը, ազգանունը հարցնուումէ: . . .

Մի ամբողջ ամփս աշակերտի ձեռին զասագիրք ասածք ամեննին չպէտք լինի: Ուսուցիչն ամենայն դասին մի կարծ բան է պատմում աշակերտներին: Եետոյ հարց ու փորձով կամ գրոյց անելու ձեռվ այդ պատմածը աշակերտների մաքերի մէջ տպաւորումէ:

Առաջին և կարեւոր բանն այն է, որ աշակերտներին այս հասկացնէ թէ, երբ որ ինքը մի հարց է առաջարկում, պէտք ամենքն ևս լսեն: Յետոյ ով որ զիտէ թէ կարող է ամբողջ նախադասութեամբ պատասխանել, նա պէտք աջ ձեռը մի փոքր ինչ բարձրացնէ: Եթէ ամենքն ևս հասկացել են հարցը ու ձեռներ բարձրացրել են, այն ժամանակ պէտք սպասեն, մինչեւ որ ուսուցիչը սորան կամ նորան հարցնէ: Ում որ հարցրեց, նա է պատասխանում: Պատասխանելու ժամանակ բացի պատասխանողից բոլորն ևս ձեռներ իջեցնում վար են զնում: Աշակերտներից ով որ նկատումէ թէ պատասխանողը բան թողեց իւր պատասխանի մէջ, կամ աւելի և կամ պակաս բան ասաց, ձեռքը կրկին բարձրացնումէ: որով ցոյց է տալիս թէ նկատողութիւն է կամենում անել: Ուսուցիչը հարցնուումէ զորան: և այսպէս շարունակ, մինչեւ որ առաջարկված հարցին կատարեալ պատասխան տրվի: Յետոյ երկրորդ, երրորդ, չորրորդ և ուրիշ կարելի և հարկաւոր եղած հարցերն է անում և նոյն կերպով պատասխաններ է պահանջում: Աշակերտներին ամեննեին կարելի չէ կարգի հաշուով հարցնել, այլ մէջ ընդ մէջ որպէս զի ամենքն ևս արթուն մնան: Չեռք բարձրացնելն մանկավարժական մի կարեւորութիւն է, որով պահանջվումէ արթնութիւն և

լարված ուշազրութիւն։ Աւսուցչի պարտաւորութիւնն է իմանալ թէ ով լաւ չէ հասկացել հարցը ով է կեսով չափ և ով է բոլորովին լսել և հասկացել։ Ակսով չափ լսողիցն ևս կարելի է պատասխան առնել ու լրացնել։ բայց ով որ ամենեին ուրիշ բան է պատասխանում։ քան թէ հարցին վերաբերեալը պէտքէ կարծ ու լուրջ կերպով հասկացնել որ շատ բանի համար ձեռք բարձրացնելը չպէտքէ լինի։

Երբ ուսուցիչը նայումէ որ ձեռք բարձրացնողները քիչ են, պարտաւոր է հարցը կրկնել, երեքրկնել և այլն, մինչեւ որ ձեռք բարձրացնողների թիւը շատանայ, Մի երկու երեքից պատասխան ստանալուց յետոյ, դարձեալ հարցնումէ թէ ով է այժմ հասկացել։

Եթէ առաջ ձեռք չբարձրացնողները այժմ բարձրացրել են, դոցանից մի քանիներին ևս հարցնէ։ Մի քանի նախադասութիւններ այդպէս առանձին առանձին ասելուց ու ասելալուց յետոյ, ինքն սկսումէ այդ բոլորը միացնել, ամբողջացնել և մի փոքրիկ պատմութիւն կամ խօսք յօրինել։ Ապա պահանջումէ որ աշակերտներից ոմանք ևս ամբողջը կրկնեն, Որպէս զի զիւրին լինի առանձին նախադասութիւններից ամբողջը կազմելը պէտքէ գոքա միմեանց հետ որ և է յարաբերութիւն և կապ ունենան։ Հարկաւոր է աշխատել, որ խօսակցութեան առարկան վերացական չլինի, այլ ըստ մեծի մասին նիւթական։ Պէտքէ աշխատել որ խօսակցութեան նիւթերը լինին այնպիսի, որոնց կարելի լինի ենթարկել աշակերտի զգայարանների ճանաչողութեանը։ Մասերը զննելիս պէտքէ կարգով գնալ կամ միշտ աշից զեպի ձախ և կամ ձախից գեպի աջ, վերից զեպի վար և կամ վարից գեպի վեր։ Այս կերպով մոքի մէջ շուտ է տպաւորվում նիւթը, բայց մի անգամ տպաւորելուց յետոյ, կարելի է խառն ի խուռն կամ մէջ ընդ մէջ ևս հարցնել։

Աշակերտները միշտ ամբողջ նախադասութիւններով պէտքէ պատասխանեն։ օրինակ եթէ մէկին հարցնումէս քո անունն ի՞նչ է, աշակերտը պէտքէ չասէ միայն—Ղազարոս, այլ պէտքէ ասէ, իմ անունը Ղազարոս է։ կամ Աարզիս է իմ անունը։

Ա. Բ.

Ա Խ Ե Տ Ե Կ Ա Ն Ո Ւ Թ Ի Ւ Ն .

(Այս տարի Գ. Ճեմարանում Ընդհանուր պատմութենից բացի բերանացի, քննութենից գրաւոր քննութիւնն ևս եղաւ։ Աշակերտների գրաւոր պատասխաններից թէ Գ. և թէ Ե. զասարանից մի կամ երկու յօդուած հրատարակելու ենք։ Երարատի մէջ, որոնց նիւթը ամբողջութիւն էներկայացնեն։ Գ. զասարանում Հին աշխարհի կաւանդվի, Ե. զասարանում—Միջին գրքեր, ներկայ յօդուածը Ե. զասարանի աշակերտ Թագէսս Պալեանի գրած պատասխանն է, որը կեղացիկ մի յօդուած կդոյցացնէ։) Խմբ.